

ղևելով, առ հասարակ վարդապետական բանին զամենեցուն զփակեալ դրունս մտաց ի բարին յորդորելով բնայր: 30 Չամենաբարի ուսուցանէր զսեր զյոյս զհաւատս զսրբութիւն զքաղցրութիւն զհեզութիւն զանոխակալութիւն, զինսամ ունելով դարմանոյ աղբատացն տանելոյ, եւ յոյս հատուցման ի խոստացեալ աւետիսն Քրիստոսի. եւ ի դատաստանացն ամենեկին¹ անշէջ հրոյն՝ յիշատակաւ յաւիտենականն չարչարանաւ սպառնալով՝ անաչառական զալստեամբն Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի: 31 Եւ այնու երկեցուցեալ, մինչեւ ամենեցուն՝ որք ի սահմանս Չայոց էին բնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ աղբատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութեամբ հաւասարութեամբ, եւ ինքեանք լրջմտութեամբ զուարթութեամբ գործէին:

32 Եւ ինքն երթեալ հասաներ ի կողմանս Տարան գաւառին, եւ ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Չայոց աշխարհին: 33 Ժողովեցան ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին եր շինեալ. զի նա եր մայր եկեղեցեացն, եւ տեղի² լեալ նախնեացն ժողովոց սինհոդոսին: 34 Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, եւ խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն եւ ժողովն հաւատոցն հաւասարութեան: 35 Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յարինեցին, եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին Չայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան աւրինացն: 36 Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատտու եւ առաջնորդ յորդորիչ եւ նախանձաւոր լինէր գործոց բարեաց: 37 Նախ ինքն առնէր, եւ ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն աւրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս եւ ի գաւառս եւ ի կողմանս կողմանս, ի կոյս կոյս, ի խորշս խորշս սահմանացն Չայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղբատանոցս, եւ ի ժողովել զախտաժեստս եւ զաւրկունս³ եւ զմարմնահարս⁴ եւ զամենայն ցաւոտս. եւ նոցուն կարգեցին աւրկանոցս եւ դարմանոց եւ ռոճիկս եւ պատանս⁵ աղբատաց: 38 Չի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, եւ սոյն կամ եղեւ ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կալեանս, եւ մի՛ ելանել ի մուրոյն տառապանս, եւ մի՛ բնաւ ելանել ըստ իւրա-

1 *Չառաջնոյ տպագրին մերոյ վրիպակ ընթերցուած՝ ուղղեցաք ըստ այլ գրչագրի: Ոմանց հաճոյ թուեցաւ ընթերնուլ ատենին:*

2 *Օրինակ մի՛ ի տեղի լեալ*

3 *Օրինակ մի՛՝ զուրկունս... ուրկանոցս*

4 *Յօր. զմարմնավարս:*

5 *Թերեւս կայեանս կամ դարմանս*